




Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿ

Այս տարի մայիսի 1-ին լրանում է Մայր Աթոռ ս. Էջմիածնի առաջին պաշտոնաթերթ **Արարատ** ամսագրի հրատարակության հարյուրամյակը:

Այս առթիվ Ն. Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ս. Ամենայն Հայոց կաթողիկոսը արտագին պարտականություն է դրել «Էջմիածին» ամսագրի խմբագրության վրա, կարևորությամբ և երախտագիտությամբ նշել այդ հիշարժան տարեթիվը, ըստ արժանվույն վեր հանել **Արարատ** ամսագրի կատարած պատմական դերը և՛ Մայր Աթոռի, և՛ հայ եկեղեցու կյանքում, և՛ մեր մշակույթի զարգացման և պատմության մեջ:

Հայրապետական հրահանգի և թելադրության համաձայն «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը, փետրվարի 8-ին, գումարեց խմբագրական մարմնի նիստ, ուր քննության առնվեցին **Արարատի** հարյուրամյակը նշելու միջոցառումները և ընդունվեցին հետևյալ որոշումները.

1. Խնդրել Վեհափառ Հայրապետին, 1968 թվականի հոկտեմբերի 12-ին թարգմանիչ վարդապետների տոնին հայ մշակույթի օրվա առիթով, հավարտ ս. պատարագի Մայր Աթոռում երջանկահիշատակ Տ. Տ. Գևորգ Դ կաթողիկոսի շիրմի վրա կատարել տալ հոգեհանգստան պաշտոն և ոգեկոչել հիշատակը ընդհանրապես հայ մշակույթի և ի մասնավորի **Արարատ** ամսագրի իրենց աշխատակցության բաժինը բերած երախտաշատ հոգևորականների և մտավորականների,

2. Հոգևոր ճեմարանի հարկի տակ կազմակերպել հոբելյանական հանդիսություն, այն մտածումով, որ **Արարատ** ամսագրի մնացուց աշխատակիցները եղել են Մայր Աթոռի միաբաններն ու Գևորգյան ճեմարանի դասախոսները.

3. «Էջմիածին» ամսագրի նոյեմբեր—դեկտեմբեր միացյալ համարը նվիրել **Արարատի** հրատարակության հարյուրամյակին, ամսագրի ոգիին, նպատակին, կատարած հոգևոր, եկեղեցական, մշակութային մեծ դերի մասին նվիրված լուրջ ուսումնասիրություններով և գիտական հոդվածներով.

4. «Էջմիածին» ամսագրում բանալ մասնավոր հոբելյանական էջ, **Արարատում** տպագրված մի շարք կրոնական, եկեղեցագիտական, մատենագրական հին էջերի արտատպության համար, որոնք ունենան նաև այժմեական նշանակություն.

5. Այս առթիվ «Էջմիածին» ամսագրում հրատարակել **Արարատում** լույս տեսած բոլոր նյութերի մատենագիտությունը ըստ բնագավառների (կրոնական, եկեղեցական, պատմական, բանասիրական, բարոագիտական և այլն) և այբուբենական, հեղինակային ցանկ:

Ստուգահեռ է առիթը, որ **Արարատի** հարյուրամյակի կապակցությամբ տրվում է «Էջմիածին» ամսագրի խմբագրությանը, նրա ոգու և առաքելությանը արդի ժառանգորդներին ու շարունակողներին, մեր երկրորդ հարգանքի և երախտագիտության տուրքը ընծայելու հայոց Աստծու և մեր սի-

րելի ժողովրդի հավատքի ու հայրենասիրության այս սրբազան օջախի մեջ, որ ամենայն հայոց Մայր Աթոռն է, առաջին անգամ եկեղեցաշեն և հայրենամեկեր այլ գործերի հետ մեր ժողովրդի հոգևոր, կրոնական, մշակութային և հայրենասիրական ծառայությանը նվիրված առաջին պաշտոնաթերթի հիմնադիրներին և նրա նվիրյալ, յուսամիտ աշխատակիցների գործերին և հիշատակին:

Շուրջ կես դար, 1868—1919 տարիներին, Մայր Աթոռի պաշտոնաթերթը քրիստոնեական լույս է ջախջախել մեր եկեղեցու զավակներին, հայ մշակույթի և հայրենիքի սերը արծարծել հայ հոգիների մեջ, հույս և հավատք ներշնչել մեր եկեղեցու, ժողովրդի և մայր հայրենիքի ապագայի մասին:

Մի հարյուրամյակ առաջ Մայր Աթոռի հովանու տակ, Ամենայն Հայոց Հայրապետի անմիջական ղեկավարության ներքո և Մայր Աթոռի միաբանության ջանքերով կազմակերպված հայ կրոնական մամուլի կազմակերպումը արդյունք է եղել եկեղեցու, ժողովրդի և հայրենաց հոգևոր, բարոյական, իմացական կյանքին զարկ տալու, «հայկազուն սերնդոց սրտի և հոգւոյն եռանդն ու աշխույժը, հայրենասիրական կենդանի զգացումը վառելու» ազգային կրթության և դաստիարակության մեծ գործին (**Արարատ**, 1868, Յառաջաբան, էջ 1), ինչպես նաև ս. Էջմիածնի առաքելությունը, գործը, ուղղությունը հայ կյանքում է՛լ ավելի օգտակար դարձնելու հետ կապված մտահոգություններին:

1771 թվականից, Սիմեոն Երևանցու օրերից ի վեր, գործում էր Մայր Աթոռի տպարանը: Հարյուր տարի հետո, սակայն, Գեվորգ Դ-ի օրերին, Մայր Աթոռի տպարանը «խեղճ վիճակի մեջ էր» (Օրմանյան, Ազգապատում, Գ հտր., էջ 4248):

Գևորգ Դ նախ մտածում է բարեկարգել տպարանը, այն օժտել նոր գրաշարական, տպագրական մեքենաներով: Մեծագործ կաթողիկոսի առ. գործը գլուխ է բերվում Մկրտիչ Սանասարյանի և Հովհ. Հովնանյանի իշխանական նվիրատվության շնորհիվ:

Այնուհետև Մայր Աթոռում և միաբանության մեջ հոգևոր, մշակութային կյանքը խթանելու, «ուսումնական շարժումը» քաջալերելու համար, Գևորգ Դ «հիւր ուսումնասէր հոգւոյ եռանդեամբը» ձեռնարկում էր մի ամսագրի հրատարակությանը, դրանով է՛լ ավելի բարձրացնելու համար նաև միաբանության անունն ու վարկը «հոգևոր պարտականությունը կատարելու և նույն, հոգևոր կյանքի վարկը անձին անպակասնելու» (**Արարատ**, 1968, էջ 2):

Կաթողիկոսի ձեռնարկը հաջողությամբ էր պատկվում և 1868 թվականի մայիսի 1-ին լույս էր տեսնում **Արարատ** ամսագրի առաջին համարը՝ Գևորգ Դ-ի տնօրինությամբ, «քննութիւն Արարատայ է անընդմիջական տեսչութեամբ Վեհափառ Հայրապետին, որոյ և հրամանաւ իսկ տպագրի»: **Արարատը** հրատարակվում էր որպէս «աշխատասիրութիւն միաբանից սուրբ Էջմիածնի», Մայր Աթոռի տպարանից:

Ամսագրի խմբագրությունը կամ վարչական «տեսչությունը» հանձնվում է Արել արքեպ. Մխիթարյանին. «ընտրութիւն և կարգաւորութիւն բովանդակ յօդուածոցն, որք պիտին մտնանիլ յամսագիրն, որոց ոճոյն վայելչութեան և պարզութեան նա՛ է պատասխանատու» (**Արարատ**, 1968, էջ 51: (Մանուկ Աբեղյան, «Համառոտ կենսագրություն Գևորգ Դ մեծագործ կաթողիկոսի Ամենայն Հայոց», Վաղարշապատ, 1899, էջ 91: Օրմանյան, Ազգ., Գ. հատոր, էջ 4248):

Գևորգ Դ-ի հրահանգով Սիմեոնը կազմում է **Արարատի** հրատարակության և խմբագրության վերաբերյալ 17 կետերից բաղկացած մի կանոնադրություն, «Կանոնք խմբագրության **Արարատ** ամսագրին», որը տրված է ամսագրի 1868 թվականի օգոստոսի համարում, էջ 51: Ըստ այս կանոնադրության, ամսագիրը հրատարակվելու է «ամսոյ յամիս, աշխատութեամբ միաբանից սրբոյ Աթոռոյս»: Խմբագրի կողքին ստեղծվում է ութ հոգուց բաղկացած խմբագրական մարմին, «անդամք **Արարատ** ամսագրին են ութն անձինք որոց վերայ հարկ անշուշտ եղեալ է պատրաստել զգիրթ ամսագրոյն»: Ութ անդամներից երկուսը համարվում են խմբագրի անմիջական օգնականներ: Խմբագրությունը ունենում է «վալելոյ գրասենեակ պատշաճաւոր այսր գործառնութեան»:

Ամսագիրը կոչվում է «**Արարատ**, ամսագիր կրօնական, պատմական բանասիրական և բարոյական գիտելեաց»:

Ամսագրի առաջին համարի «Յառաջաբան»-ում բացատրվում է **Արարատի** հրատարակության նպատակը և բովանդակության հարցի «կարգաւորութիւնը», ըստ վերոհիշյալ չորս գլխավոր ենթաբաժինների:

Ամսագրի լեզվի և ոճի. մասին խոսելիս նշվում է, որ այն կլինի «Հայաստանի Երևանայ գաւառի ասարգ աշխարհաբառ լեզուն. որը ամելի մեծն է գոաբառին»: Խմբագրությունը չի մոռա՞ծ նաև արևմտահայ մեծ հատմածի իր ընթերցողների լեզվական հարցը: Խմբագրությունը խոստանում է «մեր սիրելի ազգաւոց դիւրընտել առնել զաւն հետզհետէ, երբ առիթ կ'ունենանք յօրա-

գըրալուրս խառն գործածել» և արևմտահայերենը, «ազգային օրագրաց լեզուն»:

Ամսագրի առաջին համարը բաղկանում է 5 էջերից կամ երկայուն ութ երեսներից: Համարը բացվում է «Արարատն առ ազգն հայոց» դիմառնական գրաքար քանաստեղծությամբ:

Ապա որդիք Արարատեան

Մատիք հանդէս այս նուիրական

Յիշատակաց փառաց նախնի

Յորս հայրենիք ձեզ քաղցրացի:

Ամսագրի հուլիսի համարից սկսած, առաջին կես էջի վերև տպվում է Մեծ և Փոքր Արարատների վեհ և տպավորիչ ֆոնի վրա, առաջին պլանում, Մայր տաճարի գծագիր նկարը՝ իր հինգ գմբեթներով, պարսպապատ, ու ապա ձախ կողմը՝ Գայանեի վանքի նկարը:

Արարատ ամսագրի հրատարակությունը լավ ընդունելություն է գտնում ընթերցողների կողմից: Հինգ ամիսների ընթացքում բաժանորդների թիվը հասնում է 1200-ի:

Գևորգ Դ կաթողիկոս ամսագրի մնայուն հրատարակությունը տնտեսապես ապահովելու համար «բաժանորդությունը պարտադիր ըրավ ամեն քահանայի համար» (Ազգապատում, հատոր Գ, էջ 4249): Չեղք առնված միջոցներով ամսագրի բաժանորդների թիվը շուտով բարձրանում է շուրջ 3000-ի. «Բաժանորդագրությոն Արարատայ յօրէ հրատարակութեան (1868 մայիս) պարտաւորիչ գոյով բոլոր եկեղեցականաց հայոց» (**Արարատ**, 1888, էջ 128):

Արարատը հրատարակվեց ավելի քան կես դար և եղավ հայ կրոնական մամուլի, ինչպես նաև մեր լրագրության պատմության մեջ լավագույն բովանդակային և երկարակյաց ամսագրերից մեկը:

Արարատ ամսագիրը իր հետաքրքիր բովանդակությամբ հանդիսացավ հայ դավաճաբանական մտքի, եկեղեցական իրավուն-

քի և հայագիտության հանդիսարանը: Արդարև, ամսագիրը իր էջերը լայնորեն բացեց իրավունքի և պատմության, եկեղեցական արվեստների, մատենագրության, ձեռագրագիտության, ազգագրության, լեզվաբանության հարցերի նվիրված գիտական լուրջ հոդվածներին:

Արարատը միաժամանակ հանդիսացավ քրիստոնեական հայեցի բարոյախոսության բեմ և հայկական հարցի և դատի պաշտպանության ամբիոն:

Արարատին իրենց շնորհալի աշխատակցությունն էին բերում Մայր Աթոռի միաբանները, Գևորգյան ճեմարանի դասախոսները, հայ հոգևորականության և մեր մտավորականության լավագույն ներկայացուցիչները՝ հայտնի հայագետներ, պատմաբաններ, լեզվաբաններ, արվեստի և գիտության մարդիկ:

Արարատը սրբությամբ և պատվով կատարեց Ամենայն Հայոց Հայրապետների կողմից իր առաջ դրված հոգևոր, եկեղեցական, մշակութային և հայրենասիրական առաքելությունը:

Արարատի հարյուրամյակի ուրախ առիթով «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը իր հարգանքի և երախտագիտության առաջին, սրտագին տուրքը մատուցում է երջանկահիշատակ Ս. Տ. Գևորգ Դ Ամենայն Հայոց կաթողիկոսին, որը եղավ անդրանիկ կազմակերպիչը այդ մեծ գործի, և ապա Մայր Աթոռի, Գևորգյան ճեմարանի, հայ հոգևորականության և մեր մտավորականության այն ներկայացուցիչներին, որոնք եռանդով, նվիրումով շարունակեցին 50 տարիներ անընդհատ **Արարատի** առաքելությունը մեր եկեղեցու և մեր ժողովրդի կյանքում:

Թող հայ մշակույթի այդ երախտաշատ նվիրյալների հիշատակը պայծառ մնա մեր ժողովրդի պատմության մեջ:

